

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԿԱՊԱՆԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

21.08.2021



Սիրելի՛ կապանցիներ

Սյունյաց սիրելի մարզկենտրոնի օրը բոլորիս տոնն է, որի առիթով շնորհավորում եմ նախելառաջ բոլոր կապանցիներին, ինչպես նաեւ բոլոր սյունեցիներին:

Շատերին կարող է թվալ, թե անցնող տարվա կորուստները, չամոքված վերքերն ու սուզքը համատեղելի չեն այսօրվա տոնի հետ, բայց սահմանային ու սահմանապահ Սյունիքում նման տոն նշելն իր խորհուրդն ունի ու ինքնանպատակ չէ. կարծում եմ՝ հենց դուք՝ այստեղ բնակվողներդ, ամենից առաջ ու ամենից շատ արժանի եք զգալու հերոսական Կապանի ոգին, ինչպես նաեւ ձեր սերն ու նվիրումը նրա հանդեպ արտահայտելով՝ առավել ամուր ու կանգուն Կապանի ներկան ի ցույց դնելու աշխարհին...

Չենց նման միջոցառումներով է, որ կապանցին ապացուցում է իր քաղաքում ապրելու ու արարելու անսասան հաստատակամոլությունը, իր հողին աներեր կառչած մնալու ուժը ու այն, որ կյանքը շարունակվում է ու կշարունակվի, որ այստեղ մշակույթը զարգանում է, քարը շարվում է, արհեստավորը բանում է, հողի մշակը տքնում է, մի խոսքով, Կապանը շնչում է իր առօրյայով ու վաղվա զարգացման ծրագրեր մշակում:

Գիտեմ, որ տոնն այս տարի դիմավորում ենք այլ կարգավիճակում, այլ միջավայրում ու այլ զգացողություններով, եւ այսօր, բնականաբար, ամենից առաջ՝ մեր խոնարհումը կապանցի այն անմահ հերոսներին, որ ընկան 44-օրյա պատերազմում, հավերժ փառք նրանց հիշատակին, շուտափույթ լուրի մաղթանքս՝ սպասումով ապրող հարազատներին...

Կապանն իր կարելոր դերն ունեցավ 2020-ի աշնան մեր պայքարում, թե՛ իր զինվոր-մասնակիցներով, թե՛ լավ կազմակերպված թիկունքային աշխատանքով, թե՛ սահմանային տարբեր խնդիրների լուծմամբ եւ թե՛ իր հյուրընկալությամբ ու այստեղ ապաստանած արցախցիների հոգսերին արձագանքմամբ: Տեղահանվածներից շատերը հաստատվել ու որոշել են իրենց ապագան կառուցել Կապանում:

Բայց Կապանն ինքը հիմա դարձել է սահման ու կանգնել նոր մարտահրավերների առջեւ, այսօր ամենակարելորը սեփական հողին ամուր կանգնելու կարելորության եւ այն բանի գիտակցումն է, որ ուժեղացնելով համայնքը՝ ոչ միայն Կապանի սահմանը, այլեւ Հայաստանի դարպասն եք պահում: Իսկ Կապանը դարերով պատվով է դիմագրավել փորձություններին. այսօր էլ բոլորիս աչքի առաջ քաղաքում նորոգումներ են, կառուցապատման ու բարեկարգման աշխատանքներ, նոր նախաձեռնություններ...

Ուստի, մեր սիրելի քաղաքի տոնին բոլորիս, նախելառաջ, մաղթում եմ այնքան թանկ ու ամենակարելոր արժեք դարձած խաղաղությունը, մեր քաղաքացիներին ցանկանում եմ միասնականություն, որն ամեն հաջողության գրավականն է:

Ցանկանում եմ, որ անկախ նորահայտ հանգամանքներից ու ի հեճուկս հակառակորդի նկրտումների՝ Կապանը շարունակի ծաղկել, զարգանալ, հզորանալ:

Կապույտ ու անամպ երկինք՝ Սյունյաց աշխարհի գողտրիկ կենտրոնին, անվտանգ, ապահով ու բարեկեցիկ կյանք՝ նրա բնակիչներին:

Շնորհավոր՛ր տոնդ, Կապան: